

## ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ Չմիջամտության և ինքնիշխանության սկզբունքների տրանսֆորմացիան միջազգային իրավունքում ու միջազգային հարաբերություններում

ՄԱՐԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

*Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան*

*Հողվածում ուսումնասիրվում են չմիջամտության և ինքնիշխանության սկզբունքների էվոյուցիան՝ միջազգային հարաբերություններում և միջազգային իրավունքում գրանցված տեղաշարժերի համատեքստում: Փորձ է արվում ՄԱԿ-ի միջամտության պրակտիկայի և միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա ներկայացնել այդ սկզբունքների բովանդակությունը, դրանցում արձանագրված փոփոխությունները, ներպետական իրավասության շրջանակում գտնվող հնարավոր խնդիրները, որոնք կարող են դառնալ միջազգային կարգավորման առարկա, ինչպես նաև ինքնիշխանության դրսևորման ձևերն ու դրանց փոխկախվածությունը: Խնդիրն ուսումնասիրվում է եռաչափ հարթությունում՝ իրավական ու քաղաքական բաղադրիչների և խնդրի վերաբերյալ առկա գիտական մոտեցումների շրջանակում:*

### **Բանալի բառեր**

Ներքին գործերին չմիջամտության սկզբունք, ինքնիշխանություն, ներպետական իրավասության հարցեր, ՄԱԿ-ի Կանոնադրություն

### **Նախաբան**

Պետության ներքին գործերին չմիջամտության և ինքնիշխանության սկզբունքները միջազգային իրավական համակարգի առավել կարևոր ու միաժամանակ բարդ սահմանվող սկզբունքների թվում են: Խնդիրը պայմանավորված է միջազգային հարաբերություններում և միջազգային իրավունքում տեղի ունեցած զարգացումների արդյունքում դրանց բովանդակության փոփոխությամբ: Վերջինս պայմանավորող առավել ազդեցիկ գործոնների թվում էին 1990-ական թվականներին մի քանի տարածքներում իրագործված

ցեղասպանության դեպքերը, որոնց արդյունքում ակնհայտ դարձան «չմիջամտության» ու «չեզոքության» սկզբունքների նույնականացման և ինքնիշխանության՝ որպես բացարձակ ու անբեկանելի գաղափարի, կիրառման վտանգները: Այլ պատճառների թվում են ինքնորոշման հակամարտությունների աճող թիվը, տնական խաղաղության հաստատման համար ժողովրդավարական կառավարման առաջնահերթության գիտակցումը և 1990-ականներին նոր աշխարհակարգի ձևավորման համար մղվող պայքարը: Միաժամանակ, այսօր ինքնիշխանության և չմիջամտության սկզբունքների բովանդակության և կոնկրետ դեպքում դրանց մեկնաբանության հետ կապված խնդիրները շարունակում են մնալ օրակարգային, քանզի դրանք բազմաչափ ու բազմակողմ սկզբունքներ են, որոնց վրա ազդում են տարբեր գործոններ: Ուստի հողվածում փորձ է արվում խնդիրը դիտարկել եռաչափ հարթությունում՝ իրավական և քաղաքական բաղադրիչների, ինչպես նաև խնդրի վերաբերյալ գիտական մոտեցումների ու դրանց կիրառական դրսևորումների շրջանակում:

### **Չմիջամտության սկզբունքի էությունը միջազգային իրավունքում**

Չմիջամտության սկզբունքը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է, որն ամրագրված է ՄԱԿ Կանոնադրության մեջ և ամրապնդված պետությունների պրակտիկայում և միջազգային սովորության իրավունքում: Սկզբունքն առաջին անգամ ներկայացվել է 1648թ. Վեստֆալյան պայմանագրում, այնուհետև 1793թ. ներառվել Ֆրանսիայի Մահմանադրության մեջ (1793թ. Ֆրանսիայի Մահմանադրություն, 119-րդ հոդված): Թեև չմիջամտության սկզբունքի սահմանման առաջին փորձերն արվել են դեռևս 18-րդ դարում, դրա բովանդակությունն ու շրջանակները շարունակում են մնալ բանավեճի առարկա:

20-րդ դարի առաջին կեսին չմիջամտության սկզբունքն արձանագրող առավել նշանավոր փաստաթղթերից էր

Պետությունների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ Մոնտեվիդեոյի կոնվենցիան (1933թ.), որի 8-րդ հոդվածը սահմանում է, որ «Ոչ մի պետություն իրավունք չունի միջամտելու այլ պետության ներքին կամ արտաքին գործերին»<sup>1</sup>: Ավելի ուշ սկզբունքն ամրապնդվեց ՄԱԿ Կանոնադրության մեջ՝ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանն ու վերականգնմանն առնչվող դրույթներում:

Բացի ՄԱԿ Կանոնադրությունից, չմիջամտության սկզբունքն ամրագրված է նաև միջազգային իրավունքի մի շարք այլ փաստաթղթերում, որոնց թվում են Պետությունների ներքին գործերին միջամտելու անթույլատրելիության և նրանց անկախության ու ինքնիշխանության պաշտպանության մասին ՄԱԿ-ի հռչակագիրը (1965թ.), Պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը (1970թ.), ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտը (1975թ.):

Դրանցից առաջինում՝ 1965թ. Հռչակագրում, նշվում է, որ «այլ պետության կամ պետությունների կողմից իրականացվող ռազմական միջամտությունը կամ միջամտության ցանկացած այլ ձև կամ դրա փորձ՝ ուղղված պետության կամ դրա քաղաքական, տնտեսական ու մշակութային տարրերի դեմ, դատապարտելի են...Ցանկացած պետություն ունի իր քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային համակարգերն ազատորեն ընտրելու անձեռնմխելի իրավունք»<sup>2</sup>: Միաժամանակ, Հռչակագրի վերջին կետով ընդգծվում է, որ դրանում ներառված ոչ մի կետ չի կարող մեկնաբանվել որպես ՄԱԿ Կանոնադրության 6-րդ, 7-րդ և 8-րդ գլուխներում ամրագրված դրույթներին հակասող կետ<sup>3</sup>, որոնց

<sup>1</sup> Montevideo Convention on the Rights and Duties of States, Article 8, <https://www.ilsa.org/Jessup/Jessup15/Montevideo%20Convention.pdf>.

<sup>2</sup> Declaration on the Inadmissibility of Intervention in the Domestic Affairs of States and the Protection of their Independence and Sovereignty, 21 December 1965, <http://www.un-documents.net/a20r2131.htm>.

<sup>3</sup> ՄԱԿ Կանոնադրության 6-րդ գլուխը վերաբերում է վեճերի խաղաղ կարգավորմանը, 7-րդ գլուխը՝ խաղաղության վտանգման, խախտման և

շրջանակում ՄԱԿ Անվտանգության խորհուրդը կարող է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ուղղված միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման կամ վերականգնման ուղղությամբ:

1970թ. պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը վերահաստատում էր վերոնշյալ դրույթները՝ պետությունների ներպետական իրավասության շրջանակներում գտնվող հարցերին այլ անդամ պետությունների չմիջամտելու սկզբունքը ներառելով պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող յոթ սկզբունքների շարքում<sup>4</sup>:

Հելսինկյան եզրափակիչ ակտում սահմանվում է, որ «Մասնակից պետությունները պարտավորվում են ձեռնպահ մնալ այլ մասնակից պետության ներպետական իրավասությանը վերաբերող հարցերին ցանկացած միջամտությունից՝ ուղղակի կամ անուղղակի, կոլեկտիվ կամ անհատական՝ անկախ իրենց փոխհարաբերություններից... նրանք համապատասխանաբար ձեռնպահ կմնան մյուս մասնակից պետության դեմ որևէ զինված միջամտությունից կամ դրա սպառնալիքից»<sup>5</sup>:

Հատկանշական է, որ վերոնշյալ բոլոր փաստաթղթերն անդրադառնում են ներքին գործերին չմիջամտության սկզբունքին բացառապես պետությունների, այլ ոչ միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպությունների մակարդակով: Միակ բացառությունը ՄԱԿ Կանոնադրությունն է, որի երկրորդ գլխի 7-րդ հոդվածը սահմանում է, որ «Կանոնադրության ոչ մի դրույթ Միավորված Ազգերի Կանոնադրությանը չի լիազորում միջամտել

---

ազդեցիկ առնչությամբ կիրառվող միջոցներին, 8-րդ գլուխը՝ տարածաշրջանային համաձայնություններին:

<sup>4</sup> Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations, <http://www.un-documents.net/a25r2625.htm>.

<sup>5</sup> Conference on Security and Co-Operation in Europe Final Act, Helsinki 1975, <https://www.osce.org/helsinki-final-act?download=true>.

որևէ պետության ներքին իրավասության հարցերին և չի պահանջում անդամներից նմանօրինակ հարցերը ներկայացնել լուծման Կանոնադրության կարգով, *սակայն այդ սկզբունքը չի վերաբերում 7-րդ գլխով նախատեսված հարկադրական միջոցների կիրառմանը*»: Կանոնադրության 7-րդ գլխի 39-րդ հոդվածի համաձայն, Անվտանգության խորհուրդը որոշում է խաղաղության նկատմամբ ցանկացած սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայությունը և հանձնարարականներ է ներկայացնում կամ վճռում, թե համաձայն 41-րդ և 42-րդ հոդվածների, ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման կամ վերականգնման համար: Ավելին, ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունները միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանը նպաստելու համար պարտավորվում են, Անվտանգության խորհրդի կոչով և հատուկ համաձայնագրի կամ համաձայնագրերի համաձայն, նրան տրամադրել միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման համար անհրաժեշտ զինուժ, օժանդակություն և համապատասխան միջոցներ՝ ներառյալ սահմանը հատելու իրավունքը: Միաժամանակ, Կանոնադրության 2-րդ գլխի 7-րդ հոդվածի սահմանումն առաջ է բերում մի շարք հարցադրումներ, որոնք լրացուցիչ մեկնաբանության կարիք ունեն ՄԱԿ-ի պրակտիկայի հիման վրա: Ո՞վ և ի՞նչ կարգով է որոշում՝ արդյոք միջամտությունը կոնկրետ դեպքում արդարացված է, թե ոչ: Որո՞նք են բացառապես ներպետական իրավասության շրջանակում գտնվող հարցերը: Ո՞ր մասնավոր իրավիճակների դեպքում կարող են կիրառվել հարկադրական միջոցներ:

### **Ներպետական իրավասության շրջանակում գտնվող հարցերը և դրանց մեկնաբանության քաղաքական հնարավորությունները**

«Ներպետական իրավասություն» եզրույթը միջազգային իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում նոր չէ: Այն ներկայացվել է դեռևս Ազգերի լիգայի Կանոնադրության մեջ: Ըստ

Միջազգային իրավունքի ինստիտուտի 1954թ. ապրիլի 30-ի բանաձևի, ներպետական իրավասությունը ներառում է պետությունների իրավասության շրջանակում գտնվող բոլոր հարցերը և սահմանափակված չէ միջազգային իրավունքով<sup>6</sup>: Սահմանումն ակնհայտորեն բավական լայն է և չի արտահայտում ներպետական հարցերի առնչությամբ միջազգային սովորության իրավունքում արձանագրված տեղաշարժը: ՄԱԿ Կանոնադրությամբ ևս հստակ սահմանված չեն այն չափորոշիչները, որով կարելի է որոշել ներպետական իրավասության սահմաններում գտնվող հարցերը կամ իրավիճակները: Այդուհանդերձ, արտաքին միջամտության պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՄԱԿ-ն առաջնորդվում է Արդարադատության միջազգային դատարանի կարծիքի հիմքում ընկած այն մոտեցմամբ, որ ներպետական հարցերի շրջանակը հարաբերական է և կախված է միջազգային իրավունքում տեղի ունեցող զարգացումներից<sup>7</sup>: Այլ կերպ ասած, գոյություն չունեն այնպիսի խնդիրներ, որոնք բացառապես ներպետական են իրենց բնույթով: Այն հարցերը, որոնք միջազգային իրավունքով ենթակա են պետությունների կարգավորմանը, ժամանակի ընթացքում կարող են դառնալ միջազգային կարգավորման առարկա՝ միջազգային սովորության իրավունքի նոր նորմերի առաջ գալու կամ նոր համաձայնագրերի մշակման գործընթացի արդյունքում<sup>8</sup>:

Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսի ժամանակ մի շարք պետություններ ներկայացրեցին առաջարկ, որ Արդարադատության միջազգային դատարանը դառնա այն մարմինը, որը կորոշի պետությունների ներպետական իրավասության շրջանակ-

<sup>6</sup> **Verdross A.**, The plea of domestic jurisdiction before an international tribunal and a political organ of the United Nations, Max-Planck-Institut für ausländisches öffentliches Recht und Völkerrecht, 28, 1968, 33-40.

<sup>7</sup> **Ahmed K.**, The Domestic Jurisdiction Clause in the United Nations Charter: A Historical View, *Singapore Yearbook of International Law*, 10, 2006, 175-197.

<sup>8</sup> **Gutter J.**, Domestic Jurisdiction and Human Rights in the United Nations, Thematic Procedures of the United Nations Commission on Human Rights and International Law: in Search of a Sense of Community, 2006.

ներում գտնվող հարցերը<sup>9</sup>: Մակայն առաջարկը չընդունվեց, և ներկայումս այդ գործառույթը լիովին վերապահված է Անվտանգության խորհրդին: Ընդհանուր առմամբ, ՄԱԿ Անվտանգության խորհուրդն առանձնահատուկ ինստիտուտ է մի քանի չափումներով: Այն իրականացնում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորություններ, գործունեությունը սահմանափակված է իրավաբանորեն պարտադիր հակակշիռների և զսպումների բավական սեղմ շրջանակով, ունի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանն ուղղված լայն լիազորություններ, միակ մարմինն է՝ իրավասու լիազորել ուժի կիրառում, իսկ որոշումներն ունեն պարտադիր բնույթ՝ ՄԱԿ անդամ պետությունների համար՝ անկախ նրանց ուղղակի համաձայնությունից կամ այլ համաձայնագրերով ստանձնած պարտավորություններից: Այն համոզմունքը, որ Անվտանգության խորհրդի՝ ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ընդունած միջոցները ոչ մի իրավական սահմանափակում չունեն, հաճախ հիմնված է ՄԱԿ Կանոնադրության 25-րդ և 103-րդ հոդվածների մեկնաբանության վրա:

ՄԱԿ Կանոնադրության 25-րդ հոդվածի համաձայն, «անդամ-երկրները պարտավորվում են ենթարկվել Անվտանգության խորհրդի որոշումներին և իրագործել դրանք»<sup>10</sup>: Իսկ Կանոնադրության 103-րդ հոդվածով նշվում է, որ «այն դեպքերում, երբ Կազմակերպության անդամների պարտավորությունները կհայտնվեն հակասության մեջ այլ միջազգային համաձայնագրի հետ ունեցած իրենց պարտավորությունների հետ, գերակայություն կունենան ՄԱԿ Կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները»<sup>11</sup>: Մակայն մեկնաբանությունը, որ Կանոնադրության վերոնշյալ հոդվածները ՄԱԿ-ին օժտում են անսահմանափակ իշխանությամբ, թյուր է հետևյալ պատճառներով.

<sup>9</sup> Ahmed K., նշվ. աշխ., էջ 186:

<sup>10</sup> Charter of the United Nations, Chapter 5: The Security Council, Art. 25, <http://www.un.org/en/documents/charter/chapter5.shtml>.

<sup>11</sup> Charter of the United Nations, Chapter 16: Miscellaneous Provisions, Art. 103.

1. ՄԱԿ Կանոնադրության 24-րդ հոդվածի համաձայն, Անվտանգության խորհրդի բոլոր որոշումներն ու գործողությունները պետք է համապատասխանեն ՄԱԿ-ի սկզբունքներին և նպատակներին, որոնք շարադրված են Կանոնադրության առաջին և երկրորդ հոդվածներում<sup>12</sup>: Դրանք ստեղծում են էական սահմանափակումներ ՄԱԿ-ի գործունեության իրականացման ժամանակ՝ ապահովելով արտաքին կառավարման արդյունավետ ու խաղաղ ելք:
2. *Jus cogens* բնույթ ունեցող (համապարտադիր, անվերապահ) իրավական նորմերի հարգում: Այդ նորմերն ամրապնդված են Վիեննայի կոնվենցիայի 53-րդ և 64-րդ հոդվածներում և վերաբերում են այն հիմնարար ու անձեռնմխելի իրավունքներին և պարտականություններին, որոնք ոչ մի համաձայնագրով հնարավոր չէ շրջանցել: Հետևաբար, Անվտանգության խորհուրդը ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա հարկադիր գործողություններ կիրառելիս նույնպես պարտավոր է ձեռնպահ մնալ *jus cogens* բնույթ ունեցող նորմերի խախտումից<sup>13</sup>:

ՄԱԿ Կանոնադրության 39-րդ հոդվածի համաձայն, Անվտանգության խորհուրդը պետք է որոշի խաղաղության նկատմամբ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի դրսևորման առկայությունը: ՄԱԿ Կանոնադրության մեջ այս կետերի բովանդակությունը հստակեցված չէ, թեև նման փորձեր եղել են: Կանոնադրության ստեղծման պահին դա գրեթե բացառապես կապված էր ռազմական վտանգների հետ<sup>14</sup>: Հետագայում, մասնավորապես, Սառը պատերազմից հետո, Անվտանգության խորհուրդն ընդլայնեց իր գործունեության

<sup>12</sup> Charter of the United Nations, Chapter 5: Functions and Powers, Article 24.

<sup>13</sup> **Boon K.**, Legislative Reform in Post-Conflict Zones: Jus Post Bellum and the Contemporary Occupant's Law-Making Powers, *McGill Law Journal*, **50**, 2005, 285-326, [http://www.lawjournal.mcgill.ca/userfiles/other/3723133-1225241342\\_Boon.pdf](http://www.lawjournal.mcgill.ca/userfiles/other/3723133-1225241342_Boon.pdf).

<sup>14</sup> **Cryer R.**, The Security Council and Article 39: A Threat to Coherence? *Journal of Conflict and Security Law*, **1**, 2, 1996, 161-195.



շրջանակը, իսկ քաղաքացիական պատերազմները, ժողովրդավարության բացակայությունը և մարդու իրավունքների կոպիտ խախտումները սկսեցին դիտարկվել որպես խաղաղության նկատմամբ սպառնալիքներ: Դրան նպաստող առավել ցայտուն գործոններն էին մի քանի տարածքներում ցեղասպանության կանխարգելման հնարավորության ձախողումը (Ռուանդա, Սրեբրինիցա, Սոմալի), ինքնորոշման հակամարտությունների աճող թիվը, պետության ինքնիշխանության սկզբունքի վերախմտավորումը, տնական խաղաղության հաստատման համար ժողովրդավարական կառավարման առաջնահերթության գիտակցումը և 1990-ականներին նոր աշխարհակարգի ձևավորման համար մղվող պայքարը: Առանձնահատուկ նշանակություն ունեցան նաև ՄԱԿ Գլխավոր քարտուղարի երկու զեկույցները՝ «Խաղաղության օրակարգ»<sup>15</sup> և «Ժողովրդավարացման օրակարգ» խորագրերով<sup>16</sup>, որոնց հիմքում ընդհանուր մոտեցումների հանրագումարը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. հակամարտությունների կամ զինված բախումների բացակայությունը դեռևս անվտանգության ու խաղաղության երաշխիք չէ:

Խաղաղության նկատմամբ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի սահմանման բացակայության պայմաններում առանձնահատուկ նշանակություն ունի Անվտանգության խորհրդի բանաձևերի ուսումնասիրությունը, որոնք «Խորհրդի մտադրության հիմնական ցուցիչներն են և, քվեարկության ճանապարհով, քաղաքական աջակցության մակարդակի արտացոլումը, որը վայելում է տվյալ որոշումը»<sup>17</sup>: Դրանց

<sup>15</sup> An Agenda for Peace: Preventive Diplomacy and Related Matters, 18 Dec., 1992, <http://www.un.org/documents/ga/res/47/a47r120.htm>.

<sup>16</sup> **Boutros Gh.**, An Agenda for Democratization, United Nations, New York, 1996.

<sup>17</sup> **Manusama K.**, The United Nations Security Council in the Post-Cold War Era, Nijhoff Publishers, Brill, 2006.

ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են խաղաղության նկատմամբ սպառնալիքի որակման հետևյալ իրավիճակները<sup>18</sup>.

- Մարդու իրավունքների կոպիտ խախտումներ (Իրաք, Սոմալի, Հարավսլավիա, Ռուանդա),
- Ժողովրդավարության բացակայություն (Հայիթի, Անգոլա),
- Հակաահաբեկչական միջամտություններ (Մուդան, Աֆղանստան):

Խնդրի տեսանկյունից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում մարդու իրավունքների վերաբերյալ դիտարկումները: Հետազոտողների, միջազգային փորձագետների մի խումբ համարում է, որ մարդու իրավունքներին վերաբերող հարցերը չեն գտնվում պետությունների բացարձակ իրավասության ներքո: Հիմնական փաստարկն այն է, որ եթե որևէ հարցի անդրադարձ է կատարվում ՄԱԿ Կանոնադրության դրույթներում, այն այլևս դառնում է «միջազգային մտահոգության» առարկա: «Ցանկացած ինդիվիդ, ըստ էության, պետության ներպետական իրավասության սահմաններում է միայն այն դեպքում, եթե այն չի կարգավորվում միջազգային իրավունքով կամ ենթակա չէ նման կարգավորման... Տնտեսական ու քաղաքական փոխկախվածության արդի շրջանում հարցերի մեծ մասը, որոնք առաջին հայացքից թվում են ներպետական, ժամանակի ընթացում ստացել են միջազգային կարևորություն»<sup>19</sup>: Այս մոտեցման հակառակորդները նշում են, որ «ՄԱԿ Կանոնադրության դրույթներում մարդու իրավունքների վերաբերյալ հիշատակումները չեն վկայում դրա պարտադիր բնույթի մասին: Դրանք ներառում են միայն սկզբունքներ, այլ ոչ՝ իրավական նորմեր... ՄԱԿ Կանոնադրության համաձայն, կողմերը միայն համաձայնվել են խթանել միջազգային համագործակցու-

<sup>18</sup> **Serna Galván M. L.**, Interpretation of Article 39 of the UN Charter (Threat to the Peace) by the Security Council. Is the Security Council a Legislator for the Entire International Community?, *Anuario Mexicano de Derecho Internacional*, **11**, 2011, 147-185.

<sup>19</sup> **Lauterpacht H.**, International Law and Human Rights, London: Stevens and Sons, 1950, p. 178.

թյունն այդ հարցերում»<sup>20</sup>: Արտաքին միջամտության համատեքստում մարդու իրավունքների վերաբերյալ զանգվածային խախտումները հաճախ ներկայացվել են որպես դրանց լեգիտիմացման փաստարկ (օրինակ, ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությունը Կոսովոյում):<sup>21</sup>

«Ագրեսիայի» սահմանման վերաբերյալ Գլխավոր Ասամբլեայի 3314 (1974) բանաձևի նախաբանում նշվում է, որ «ագրեսիան ուժի ապօրինի կիրառման առավել լուրջ և վտանգավոր ձև է»: Ագրեսիան սահմանվում է որպես «պետության կողմից ռազմական ուժի կիրառում այլ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության դեմ կամ ՄԱԿ Կանոնադրության հետ անհամատեղելի ցանկացած այլ կերպ»: Բանաձևի 3-րդ հոդվածում նշվում են ագրեսիայի հնարավոր ձևերը, որոնք սակայն չեն բացառում դրա դրսևորման այլ ձևեր: Դա է փաստում 4-րդ հոդվածը, որում ընդգծվում է, որ 3-րդ հոդվածում թվարկված ագրեսիայի գործողությունների ցանկը լիարժեք չէ, և Անվտանգության խորհուրդը ՄԱԿ Կանոնադրության դրույթների համաձայն կարող է որոշել դրա առկայությունը: Չնայած դրան, Անվտանգության խորհուրդն իր բանաձևերում հազվադեպ է հղում արել ագրեսիայի գործողություններին և նույնիսկ այդ դեպքերում չի անդրադարձել 3314 բանաձևին<sup>22</sup>: Սակայն, ինչպես նշում է Բրոմսը, որևէ բանաձևի իրավաչափությունը չի կարող չափվել Անվտանգության խորհրդի՝ դրա բովանդակության հիշատակման քանակով: Անվտանգության խորհրդի մշտական անդամները՝ որպես Գլխավոր Ասամբլեայի անդամներ, իրենց համաձայնությունն են տվել բանաձևի ընդունմանը:

<sup>20</sup> **Abdulrahim V.**, The Question of Domestic Jurisdiction and the Evolution of United Nations Law of Human Rights, *International Studies*, **47**, 2010, 247-265.

<sup>21</sup> **Istrefi R.**, International Security Presence in Kosovo and Its Human Rights Implications, *Croatian International Relations Review*, **13**, 80, 2017, 131-154.

<sup>22</sup> **O'Connell M. E.**, Niyazmatov M., What is Agression?: Comparing the Jus ad Bellum and the ICC Statute, *Journal of International Criminal Justice*, **10**, 2012, 189-207.

1996 թվականից ի վեր ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլուխը հաճախ կիրառվում է որպես տարածքի միջազգային կառավարման հաստատման իրավական հիմք՝ նշելով այդ տարածքներում խաղաղության նկատմամբ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի առկայությունը: Ընդ որում, այդ պրակտիկան օգտագործվում է ոչ միայն հակամարտությունների կարգավորման (մեծամասամբ՝ ինքնորոշման հակամարտությունների դեպքում), այլև պետության կառուցման գործընթացին աջակցության նպատակով: Ոստի, աշխատանքում առանձնացվել են երեք հիմնական իրավիճակներ, որոնք Անվտանգության խորհուրդը դիտարկել է որպես խաղաղության և անվտանգության նկատմամբ սպառնալիք և որոնց հիման վրա լիազորվել է միջազգային կառավարումը: Թեև միջազգային կառավարման մանդատում Անվտանգության խորհուրդը, որպես կանոն, նշում է մարդու իրավունքների զանգվածային խախտումները, սակայն դա հիմնականում ներքոհիշյալ երեք իրավիճակների տրամաբանական հետևանք է, այլ ոչ՝ անմիջական պատճառ.

1. Ժողովուրդների՝ ինքնորոշման իրավունքի տևական խոչընդոտումը,
2. Պետության ձախողումը,
3. Տարածաշրջանային կայունությանը սպառնացող ներպետական իրավիճակները<sup>23</sup>:

Կարելի է արձանագրել, որ առաջին և երկրորդ կետերը միմյանց հետ սերտորեն կապված են: Թեև ինքնորոշման հակամարտությունները ծավալվում են կոնկրետ տարածքում, դրանք սերտորեն կապված են տարածաշրջանային և միջազգային դինամիկայի հետ: Նույնը վերաբերում է նաև երկրորդ և երրորդ կետերին:

<sup>23</sup> **Kirakosyan M.**, International Territorial Administration as a Conflict Resolution Mechanism: Possibilities and Challenges, Global Development and Security Studies Program, the Local Roots of Global Peace, Conference Proceedings, Yerevan, NT Holding, 2016, pp. 130-139.

1. *Ժողովուրդների՝ ինքնորոշման իրավունքի տևական խոչընդոտումը*: 1990 թվականից ի վեր հակամարտությունների գրեթե կեսը ծագել կամ սրվել է ինքնորոշման ձգտող խմբերի պայքարի արդյունքում, որոնց վերջնանպատակը կամ ավելի լայն ինքնավարությունն է, կամ լիարժեք անկախությունը<sup>24</sup>: Գերակշիռ դեպքերում մետրոպոլիան ընդդիմացել է ինքնորոշման պահանջին՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումների, ընդհուպ՝ ցեղասպանության փորձի ճանապարհով: Արևելյան Թիմորը և Հարավային Սուդանը դրա ակնառու օրինակներից են:

Արևելյան Թիմորում միջազգային կառավարման հաստատման հարցում վճռական դերակատարություն ունեցան ոչ թե մարդու իրավունքների պարբերական բնույթ ստացած խախտումները՝ քսանչորս տարի տևած օկուպացիայի արդյունքում, որոնք միտված էին սահմանափակելու թիմորցիների ինքնորոշման իրավունքն, այլ առաջինի անմիջական հետևանք հանդիսացող ցեղասպանության փորձը: Կառավարման հաստատման վերաբերյալ Ինդոնեզիայի համաձայնությունը ձեռք բերվեց միայն այն բանից հետո, որք ՄԱԿ-ը նախազգուշացրեց, որ 1999թ. Թիմորում տեղի ունեցածը պաշտոնապես կորակի որպես ցեղասպանություն<sup>25</sup>: Նույն կերպ, Հարավային և Հյուսիսային Սուդանի միջև քսանամյա պատերազմը պատճառ էր դարձել երկու միլիոն զոհերի և միլիոնավոր տեղահանված անձանց<sup>26</sup>: Չնայած երկու դեպքում էլ ռազմական և քաղաքացիական միջազգային ներկայությունը վերջ դրեց մարդու իրավունքների զանգվածային խախտումներին և աջակցեց նոր պետության ստեղծման գործընթացին, այդուհանդերձ այն ինքնին չնվազեցրեց ապակայունացման հավանական վտանգը: ինչպես նշում են Ուիլիամսը և Պեկին, միջազգային կառավարման

<sup>24</sup> **Toft M.**, Self-Determination, Secession, and Civil War, *Terrorism and Political Violence*, **24**, 4, 2012, 581-600.

<sup>25</sup> **Թորոսյան Տ.**, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, Տիգրան Մեծ, 2008, էջ 124:

<sup>26</sup> Sudan (North-South Ethnic War) (1983-2005), *Modern Conflicts, Political Economy Research Institute*, <http://www.peri.umass.edu/fileadmin/pdf/Sudan1.pdf>.

պրակտիկայի շրջանակներում ապակայունացման վտանգները կարող են առաջանալ երկու համատեքստում. երբ պետությունը նույնիսկ ինստիտուտների ստեղծման երկարատև գործընթացից հետո ի վիճակի չի լինում իրականացնել արդյունավետ իշխանություն և երբ նոր պետության գոյությունն ինքնին ստեղծում է ապակայունացնող քաղաքական դինամիկա<sup>27</sup>: Առաջին իրավիճակը բնորոշ էր և Արևելյան Թիմորին, և Հարավային Սուդանին՝ նախկին գաղութներ, որոնք գաղութարար տերությունների՝ տարածքից դուրս գալուց հետո, օկուպացվել էին հարևան պետությունների կողմից: Երկու դեպքում էլ բացակայում էր ինքնակազմակերպման և ինքնակառավարման պրակտիկան: Ուստի, ՄԱԿ-ը կանգնել էր բավական բարդ մարտահրավերի առջև: Անհրաժեշտ էր լուծել ոչ միայն կարգավիճակի, ինքնակառավարման և պետական ներուժի ձևավորման հետ կապված խնդիրներն, այլև, որն ամենաբարդն է, իրականացնել հասարակական գիտակցության տրանսֆորմացիա, ինչը գաղութային անցյալի անմիջական հետևանք է: Կարգավիճակի խնդիրը արդյունավետ կերպով լուծվեց 2002թ. Արևելյան Թիմորի ժողովրդավարական հանրապետության և 2011թ. Հարավային Սուդանի հանրապետության ստեղծմամբ: Մյուսևանդերձ, «անկախության նախապատրաստման»<sup>28</sup> բացն արտահայտվեց Թիմորի 2006թ. ճգնաժամի և անկախության հռչակումից մեկ ամիս անց Հարավային Սուդանում վերսկսված էթնիկ բռնությունների տեսքով:

2. *Պետության ձախողումը*: Միջազգային կառավարում կիրառվում է նաև ձախողված պետություններում՝ հղում անելով միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնալիք ներկայացնող տարրերի առկայությանն այդ պետություններում: «Ձախողված պետությունը» հարաբերականորեն նոր գաղափար է միջազգային հարաբերություններում և զգալի կարևորություն է

<sup>27</sup> **Williams P., Pecci F.**, Earned Sovereignty: Bridging the Gap Between Sovereignty and Self-Determination, *Stanford Journal of International Law*, **40**, 1, 2004, 347-386.

<sup>28</sup> **Kirakosyan M.**, International Territorial Administration as a Conflict...

ստացել 1990-ական թվականների սկզբին՝ մասամբ նաև 1993թ. Հելմանի և Ռաթների «Փրկելով ձախողված պետությունները»<sup>29</sup> և 1994թ. Կապլանի «Մոտեցող անարխիա»<sup>30</sup> հոդվածի հրապարակմամբ: Դրանից հետո գաղափարը լայնորեն օգտագործվում է՝ բնորոշելու համար այն պետությունները, որոնք չունեն բավարարներուժ՝ որպես միջազգային համայնքի լիարժեք անդամներ դրսևորվելու համար: Քանի որ պետությունները միջազգային իրավական համակարգի հիմնական դերակատարներն են, դրանց ձախողումը համարվում է սպառնալիք ամբողջ համակարգի գոյության ու շարունակականության համար: Թեև չկա «ձախողված պետության» հստակ սահմանում, ընդհանուր բնութագիրը վերաբերում է պետության ներքին կազմալուծմանն ու փլուզմանը և բնակչությանը անհրաժեշտ հանրային ծառայություններ մատուցելու անկարողությանը<sup>31</sup>:

«Ձախողված պետության» գաղափարի արմատներն ընկած են ապագադրությաման գործընթացի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի կիրառման հիմքում: Վերջինիս իրացման արդյունքում հատկապես սառը պատերազմի ավարտից հետո կարճ ժամանակահատվածում ձևավորվեցին զգալի թվով պետություններ, որոնք տևական ժամանակահատված ի վիճակի չէին իրականացնել ինքնիշխան պետության գործառույթները: Ներպետական մակարդակում ձախողված պետություններն իրական վտանգ են բնակչության բարօրության, հատկապես՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի տեսանկյունից: Սակայն, ինչպես նշում է Բրաբանդերը, ՄՄԿ Անվտանգության խորհրդի՝ միջազգային խաղաղության և անվտանգության նկատմամբ սպառնալիքի առնչությամբ հարկադիր միջոցների կիրառման տեսանկյունից «ձախողված պետության» որակումը չի կարող սահմանափակվել

<sup>29</sup> Helman G., Ratner S., Saving Failed States, *Foreign Policy*, 3, 89, 1993, 3-20.

<sup>30</sup> Kaplan R., The Coming Anarchy, *Atlantic Monthly*, 273, 2, 1994, 44-65.

<sup>31</sup> De Brabandere E., The Responsibility for Post-Conflict Reforms: A Critical Assessment of Jus Post Bellum as a Legal Concept, *Vanderbilt Journal of Transnational Law*, 43, 119, 2010, 119-149.

սուսկ ներպետական ասպեկտով: Սուսկ այն փաստը, որ պետությունն իրականացնում է ոչ արդյունավետ ներպետական կառավարում, բավարար չէ կարծել, որ այն իրեն չի կարող արդարացնել որպես միջազգային համայնքի անդամ: Միայն այն դեպքում, երբ կան բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ պետությունն իսկապես վտանգ է ներկայացնում միջազգային խաղաղության ու անվտանգության համար, Անվտանգության խորհուրդը կարող է միջամտել այդ պետության ներքին գործերին<sup>32</sup>: Սակայն, ինչպես արդեն նշվել է, ՄԱԿ Կանոնադրությամբ հաստակ սահմանված չեն այդ իրավիճակները, ինչը էապես բարդացնում է դրանց որոշման խնդիրը: Նամիբիայում (1989թ.) և Կամբոջայում (1991թ.) ՄԱԿ-ի առաքելություններն առաջիններից էին Խնամակալության համակարգից դուրս ձախողված պետություններին աջակցության տեսանկյունից: Դրանց հաջորդեց 1995թ. Բոսնիա և Հերցեգովինայի ընդլայնված մանդատը և 1999թ. Կոսովոյում և Արևելյան Թիմորում ՄԱԿ-ի լիարժեք կառավարման դեպքերը:

3. *Տարածաշրջանային կայունությանը սպառնացող ներպետական իրավիճակներ*: ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի մեկնաբանության շրջանակներում «խաղաղություն» հասկացությունն ավելին է, քան պետությունների միջև պատերազմի բացակայությունը: Օրինակ, Իրաքի դեպքում 1991թ. Անվտանգության խորհուրդը մտահոգված էր բնակչության զանգվածային ճնշումներով երկրի տարբեր հատվածներում՝ առավել հաճախ քրդաբնակ շրջաններում, ինչը հանգեցրել էր փախստականների հսկայական հոսքի պետական սահմաններից դուրս և միջսահմանային ներխուժումների՝ այդպիսով վտանգելով տարածաշրջանային խաղաղությանն ու անվտանգությանը<sup>33</sup>: Կոսովոյում միջազգային կառավարման հաստատումը նույնպես պայմանավորված էր մասամբ տարածաշրջանային անվտանգության նկատառումներով: 1998թ. սկսած Կոսովոյի հակամարտությունը

<sup>32</sup> Նույն տեղում:

<sup>33</sup> Security Council Resolution 688 (1991), <http://fas.org/news/un/iraq/sres/sres0688.html>.



քաղաքացիական պատերազմից վերաճեց միջսահմանային հակամարտության, որն ընդգրկում էր ոչ միայն Կոսովոյի ազատագրական բանակը, Սերբիայի անվտանգության ուժերն ու ներքին գործերի նախարարության հատուկ ոստիկանական ուժերն, այլև ՆԱՏՕ-ի մի շարք անդամ պետությունների զորախմբեր: Թեև պատերազմը չէր տարածվել Ալբանիայի և Մակեդոնիայի ուղղությամբ, այն զգալի ազդեցություն էր ունեցել փախստականների իրավիճակի վատացման տեսանկյունից<sup>34</sup>: 1999թ. ԵԱՀԿ զեկույցի համաձայն, ռազմական բախումները և էթնիկ զտումները հանգեցրել են ավելի քան 450.000 մարդու տեղահանման և արտաքսման հարևան պետություններ: Ուստի Ռամբույեի բանակցությունների ձախողումից և ՆԱՏՕ-ի միջամտությունից հետո ՄԱԿ-ը Կոսովոյում հաստատեց ժամանակավոր կառավարում՝ Կոսովոյի ճգնաժամի արդյունքում Արևմտյան Բալկաններում տարածաշրջանային կայունության վերականգնման համար: Ավելին, 1244 (1999) բանաձևում Անվտանգության խորհուրդը ողջունում էր միջազգային կազմակերպությունների նախաձեռնությունը Հարավարևելյան Եվրոպայի կայունության պակտի իրականացման ուղղությամբ՝ ժողովրդավարության, տնտեսական բարգավաճման, կայունության և տարածաշրջանային համագործակցության խթանման համար<sup>35</sup>:

### **Ինքնիշխանության սկզբունքի բովանդակությունը և դրսևորման ձևերը**

Չմիջամտության սկզբունքն, իր հերթին, ինքնիշխանության սկզբունքի ածանցյալն է: Քանի որ ինքնիշխանությունը մի քանի և նույնիսկ իրարամերժ նորմեր ընդգրկող հայեցակարգ է, որին

<sup>34</sup> **Zuercher Ch., Roehner R., Riese S.**, External Democracy Promotion in Post-Conflict Zones: Evidence from Case Studies, *Taiwan Journal of Democracy*, **5**, 1, 241-259.

<sup>35</sup> UN Security Council Resolution 1244 (1999), <https://documents-dds.ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/172/89/PDF/N9917289.pdf>.

բնորոշ են այնպիսի բաղկացուցիչներ, ինչպիսիք են տարածքը, բնակչությունը, ինքնավարությունը, իշխանությունը, վերահսկողությունը և ճանաչումը, ուստի միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների շրջանակներում այն վիճահարույց հայեցակարգ է՝ ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական տեսանկյունից<sup>36</sup>: Դասական մոտեցման շրջանակներում, որին հարում են ռեալիստները և նեոռեալիստները, ինքնիշխանությունը ընկալվում և բնորոշվում է որպես պետությունների հաստատուն և անբեկանելի բնորոշիչ, որը ենթադրում է տարածքի նկատմամբ գերագույն իշխանություն: Ինքնիշխանությունը դիտարկվում է գերազանցապես Երեսնամյա պատերազմի ավարտն ազդարարած Վեստֆալյան համաձայնագրի շրջանակներում, որը սահմանում էր յուրաքանչյուր ազգ-պետության՝ իր տարածքի նկատմամբ և ներպետական հարցերում ինքնիշխանության իրավունքը՝ բացառելով ցանկացած արտաքին ներգրավվածություն՝ պետության ներքին գործերին չմիջամտության սկզբունքի հիման վրա (վեսթֆալյան ինքնիշխանություն)<sup>37</sup>: Ինքնիշխանության՝ որպես ոչ բացարձակ սկզբունքի իրավական արտահայտությունը եղավ Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագիրը (16 դեկտեմբերի, 1966): Վերջինս կարևոր նշանակություն ունեցավ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչման տեսանկյունից: Այն սահմանում էր, որ «բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, և այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ապահովում տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»<sup>38</sup>:

<sup>36</sup> **Zaum D.**, *The Sovereignty Paradox: The Norms and Politics of International Statebuilding*, US., Oxford University Press, 2007, p. 28.

<sup>37</sup> **Scharf M.**, *Earned Sovereignty: Juridical Underpinnings*, *Denver Journal of International Law and Policy*, **31**, 3, 2004, 273-287.

<sup>38</sup> *International Covenant on Civil and Political Rights*, General Assembly resolution 2200A (XXI) of 16 December 1966, <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/ccpr.aspx>.

20-րդ դարի սկզբին արդեն կարծիքներ էին հնչում ինքնիշխանության՝ որպես բացարձակ և անսահմանափակ իշխանության, դասական մոտեցման վտանգների մասին: Նշվում էր, որ վեստֆալյան ինքնիշխանությունը, նախևառաջ, ապահովում է ազգերի և նրանց ղեկավարների, այլ ոչ քաղաքացիների պաշտպանությունը: Ինքնիշխանության նախապայման դարձավ այն պահանջը, որ պետությունը պետք է գործի իրավունքի գերակայության շրջանակներում՝ ապահովելով մարդու իրավունքների նկատմամբ լիարժեք հարգանք<sup>39</sup>: Ինքնիշխանության սկզբունքի վերաիմաստավորման պատճառների շարքում նշվում է նաև զանգվածային ոչնչացման զենքերի տարածումը, ցեղասպանությունը, ձախողված և դյուրաբեկ պետությունների առաջացումը և այլն<sup>40</sup>:

Եթե ինքնիշխանությունը դիտարկվի դասական մոտեցման շրջանակներում, ապա վստահաբար կարելի է պնդել, որ եթե չկա միջազգային ճանաչում (արտաքին ինքնիշխանություն), չկա նաև ինքնիշխանություն: Պետությունը կամ ճանաչված է, կամ այն պետություն չէ: Ըստ այդ մոտեցման, ինքնիշխանությունը պետությունների հաստատուն և էկզոգեն (արտաձին) հատկանիշ է: Սակայն այսօր գիտական շրջանակներում առավել տարածված է այն մոտեցումը, որ ինքնիշխանությունը բազմակողմ և բազմաչափ հասկացություն է՝ տարբեր և փոփոխական իմաստներով<sup>41</sup>: Այդ տեսանկյունից առանցքային նշանակություն ունի Կրասների դասակարգումը, որով հեղինակն առաձնացնում է ինքնիշխանության չորս ձև: Դրանք են.

<sup>39</sup> Kofi Annan, Sovereignty-the State and the Individual, Stockholm Conference, Plenary Session I: Current Global Trends Affecting the Work of Ombudsmen, June 9, 2009, [file:///C:/Users/Admin/Downloads/Stockholm%20Conference\\_04.%20Plenary%20Session%20I\\_Kofi%20Annan.pdf](file:///C:/Users/Admin/Downloads/Stockholm%20Conference_04.%20Plenary%20Session%20I_Kofi%20Annan.pdf).

<sup>40</sup> Jackson J., Sovereignty-Modern: A New Approach to an Outdated Concept, *The American Journal of International Law*, 97, 2003, 782-802.

<sup>41</sup> Lake D. A., Reflections, evaluation, integration: The New Sovereignty in International Relations, *International Studies Review*, 5, 3, 2003, 303-323; Krasner S., Sovereignty: Organized Hypocrisy, NJ., Princeton University Press, 1999.

- Ներպետական ինքնիշխանություն, որը վերաբերում է պետական իշխանության ֆորմալ կազմակերպմանը և դրա արդյունավետ իրականացմանը:
- Փոխապայմանավորող ինքնիշխանություն, որը վերաբերում է պետական իշխանության մարմինների՝ պետության սահմաններից դուրս տեղեկատվության, գաղափարների, մարդկանց, կապիտալի հոսքերի կարգավորումն իրականացնելու գործառույթին:
- Միջազգային-իրավական ինքնիշխանություն, որը վերաբերում է փոխադարձ ճանաչման պրակտիկային՝ որպես կանոն այն տարածքային միավորների միջև, որոնք ունեն ֆորմալ իրավական անկախություն:
- Վեսթֆալյան ինքնիշխանություն, որը ենթադրում է քաղաքական կազմակերպման ձև, որի դեպքում ներպետական կառավարումը զերծ է արտաքին միջամտությունից:<sup>42</sup>

Միաժամանակ, Կրասներն ընդգծում է, որ այս ձևերը չեն փոխապայմանավորում մեկը մյուսին: Պետությունը կարող է տիրապետել ինքնիշխանության վերոնշյալ ձևերից որևէ մեկին, սակայն չունենալ մյուսը: Օրինակ, միջազգային-իրավական ինքնիշխանությունը կարող է խաթարել վեսթֆալյան ինքնիշխանությունը, եթե պետության ղեկավարները կնքեն համաձայնագիր, որով ճանաչում են արտաքին իշխանության կառույցները, ինչպես ԵՄ անդամ երկրների դեպքում է: Նույն կերպ, պետությունը կարող է տիրապետել միջազգային-իրավական ինքնիշխանության, լինել ճանաչված այլ պետությունների կողմից, սակայն ունենալ սահմանափակ ներպետական ինքնիշխանություն: 1990-ական թվականներին Աֆրիկայի որոշ ձախողված պետություններ, այդ թվում՝ Մոմալին, դրա ակնհայտ օրինակ են: Ավելին, պետությունը կարող է օժտված լինել միջազգային-իրավական, վեսթֆալյան և ներպետական ինքնիշխանությամբ, սակայն ունենալ միջսահմա-

<sup>42</sup> Krasner S., նշվ. աշխ.:

նային հոսքերը կառավարելու շատ սահմանափակ իրավունք, ինչը հաճախ դիտվում է որպես գլոբալացման արդյունք<sup>43</sup>:

Միջազգային-իրավական ինքնիշխանությունն առավել հաճախ անվանում են նաև «արտաքին ինքնիշխանություն», իսկ վերաֆայան ինքնիշխանությունը՝ «ներքին ինքնիշխանություն»: Որոշ հեղինակներ<sup>44</sup> ինքնիշխանության վերոնշյալ ձևերին անդրադառնում են նաև որպես բացասական և դրական ինքնիշխանություններ: Առաջինը սահմանվում է որպես ազատություն արտաքին միջամտությունից, իսկ դրական կամ եմպիրիկ ինքնիշխանությունը վերաբերում է պետական խնդիրների արդյունավետ լուծման, ինչպես նաև քաղաքական, իրավական և սոցիալ-տնտեսական մի շարք հարցերի շուրջ անկողմնակալ որոշումների ընդունման կարողությանը<sup>45</sup> կամ, այլ կերպ ասած, իրական ինքնակառավարմանը: Ինքնիշխանության վերոնշյալ երկու ձևերի համատեքստում կարևոր է պարզել, թե արդյոք ներքին ինքնիշխանությունը կարող է իրապես գործարկվել առանց արտաքին ինքնիշխանության և ինչ ձևեր կարող է ունենալ:

Թեև առաջին հայացքից թվում է, թե ներքին ինքնիշխանությունն արտաքին ինքնիշխանության նախապայման է, սակայն փոփոխվող իրողությունների պայմաններում նկատվում է լիովին հակառակ միտումը: Եթե հաշվի առնվի ներքին ինքնիշխանության վերոնշյալ սահմանումը, ապա մի շարք տարածքների չէր վերապահվի արտաքին ինքնիշխանություն (ճանաչում) և ընդհակառակը: Դրա վառ օրինակ է Կոսովոյի Հանրապետությունը: Չնայած 2008թ. վերահռչակված անկախությանը և պետության կառուցման գործընթացում միջազգային դերակատարաների տևական լայնածավալ ներգրավմանը, այն ունի ձախողված պետությանը բնորոշ հատկանիշներ, մասնավորապես չի

<sup>43</sup> Krasner S., նշվ. աշխ., էջ 4:

<sup>44</sup> Kreijen G., *State Failure, Sovereignty and Effectiveness*, Leiden, Martinus Nijhoff Publishers, 2004; Ronzoni M., *Two Conceptions of State Sovereignty and Their Implications for Global Institutional Design*, *Critical Review of International Social and Political Philosophy*, 15, 5, 2012, 573-591.

<sup>45</sup> Ronzoni M., նշվ. աշխ.:

իրականացնում ամբողջ տարածքի նկատմամբ լիարժեք վերահսկողություն, ունի թույլ տնտեսություն և գործազրկության բարձր մակարդակ: Արդարադատության և իրավունքի ոլորտներում կա կոռուպցիայի և ինստիտուցիոնալ թուլության բարձր մակարդակ, ինչպես նաև դանդաղ առաջընթաց միջազգային մասնակցության ուղղությամբ<sup>46</sup>: 2006թ. պաշտոնական հաղորդագրության մեջ Եվրոպական հանձնաժողովն ընդգծում էր այն առանցքային ոլորտները, որոնց ուղղությամբ երկիրն արձանագրել է որոշ առաջընթաց և ոլորտներ, որոնք ունեն լուրջ բարեփոխումների կարիք, մասնավորապես՝ կառավարության և ընդդիմության միջև շարունակական քաղաքական բևեռացումը, արդարադատության համակարգի խնդիրները, ընտրական բարեփոխումների անհրաժեշտությունը և այլն:<sup>47</sup> Ի հակադրություն դրան, Արցախի Հանրապետությունը, զրկված լինելով արտաքին ինքնիշխանությունից, իրականացնում է լիարժեք ներքին ինքնիշխանություն՝ վերը սահմանված իմաստով<sup>48</sup>: Ավելին, չճանաչված պետությունների վերաբերյալ Ֆրիդըմ Հաուսի զեկույցների վերլուծությունը հաստատում է Թենսիի այն պնդումը, որ ժողովրդավարցման գործընթացի հաջողությունը ևս ամբողջությամբ պայմանավորված չէ ճանաչմամբ<sup>49</sup>: Ուստի, կարելի է արձանագրել, որ ներքին ինքնիշխանությունը չի ուղղորդվում բացառապես արտաքին ինքնիշխանությամբ: Նույն կերպ արտաքին

<sup>46</sup> **Visoka G.**, The Obstacles to Sustainable Peace and Democracy in Post-Independent Kosovo, *Journal of Conflict Transformation and Security*, 1, 2, 2011, 25-38.

<sup>47</sup> Commission Staff Working Document, Kosovo 2016 Report, Brussels, 9 November, 2016, [https://eeas.europa.eu/sites/eeas/files/20161109\\_report\\_kosovo.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/20161109_report_kosovo.pdf)

<sup>48</sup> **Կիրակոսյան Մ.**, Միջազգային կառավարումը՝ որպես հակամարտության կարգավորման հնարավորություն և, թե խոչընդոտ, ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդիմարտահրավերները միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԱԵԳՄՄ, 2016, 206-213:

<sup>49</sup> Freedom House Reports, <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2018>, Tansey O., Regime-Building: Democratization and International Administration, NY, Oxford University Press, 2009.

ինքնիշխանությունը չի ենթադրում լիակատար ներքին ինքնիշխանություն, մասնավորապես, այն դեպքերում, երբ ներքին պատերազմի, ապստամբության, ճնշման կամ պետության ձախողման հետևանքով բնակչությունը կրում է լուրջ վնաս և այդ պետությունը չի ցանկանում կամ ի գործու չէ դադարեցնել կամ կանխարգելել այն: Այս հաստատագրման հիմքերն ամրապնդվեցին Պետական ինքնիշխանության և միջամտության հարցերով միջազգային հանձնաժողովի՝ «Պաշտպանելու պատասխանատվություն» զեկույցով<sup>50</sup>: Նոր մոտեցմամբ պետության ինքնիշխանությունը դադարեց ընկալվել որպես արտոնություն: Այն առաջին հերթին սկսեց մեկնաբանվել որպես պետության պատասխանատվություն, որի ձախողման դեպքում միայն միջազգային հանրությունն իրավասու է իրականացնել պաշտպանելու պատասխանատվությունը<sup>51</sup>: Հատկանշական է, որ ինքնիշխանության այդ մոտեցումը նոր չէ: Դեռևս Հոբսն իր հայտնի *Լևիատան* աշխատության մեջ նշում էր, որ «եթե պետությունն այլևս չի կարողանում արդյունավետորեն իրականացնել իրեն վերապահված գործառույթները, ապա այն այլևս չի որակվում որպես ինքնիշխան»<sup>52</sup>:

Վերջին շրջանում գիտական շրջանակներում արծարծվում է նաև «վաստակած ինքնիշխանության» (earned sovereignty) գաղափարը, որը վերաբերում է այն տարածքային միավորներին, որոնք պետք է բավարարեն մի շարք չափորոշիչների՝ միջազգային վերահսկողության ներքո իրենց կարգավիճակը հաստատելու (ճանաչված պետություններ) կամ այդ կարգավիճակը հայցելու համար (չճանաչված պետություններ): Հակամարտությունների կարգավորման այդ սկզբունքը նպատակաուղղված է կանխելու ապակայունացման հնարավոր վտանգները՝ կապված արագ

<sup>50</sup> Report of the International Commission on Intervention and State Sovereignty, The Responsibility to Protect, International Development Research Centre, December 2001.

<sup>51</sup> **Մուրադյան Լ.**, Մարդասիրական միջամտության իրականացման իրավական հիմքերը և կիրառման խնդիրները, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1, 9, 2018, 89-110:

<sup>52</sup> **Hobbes T.**, *Leviathan*, Cambridge, Cambridge University Press, 1991.

անկախացման հետ, իշխանության լիազորությունների աստիճանական փոխանցման ճանապարհով: «Վաստակած ինքնիշխանության» մոտեցման շրջանակներում առանձնացվում են առանձնացվում են երեք հնարավոր սցենարներ<sup>53</sup>.

- Երբ կոնկրետ ժամանակահատվածի ընթացքում տարածքն իրականացնում է ընդլայնվող իշխանություն նախքան վերջնական կարգավիճակի սահմանումը (փուլային ինքնիշխանություն),
- Երբ տարածքը պետք է բավարարի կոնկրետ նախապայմանների կամ չափանիշների խմբի՝ նախքան կսահմանվի կոնկրետ կարգավիճակ (պայմանական ինքնիշխանություն),
- Երբ ինքնիշխան տարածքային միավորը այս կամ այն չափով սահմանափակված է իր ինքնիշխանության կամ գործառույթների իրականացման գործում, օրինակ՝ վարչական կամ ռազմական արտաքին ներկայության ճանապարհով (սահմանափակ ինքնիշխանություն):

Հակամարտությունների կարգավորման շրջանակներում այդ երեք ձևերից միջազգային համայնքն առավել հաճախ կիրառում է պայմանական ինքնիշխանությունը<sup>54</sup>, որը ենթադրում է, որ տարածքը պետք է բավարարի մի շարք նախապայմանների, որոնք սահմանված են ուղղակիորեն կամ անուղղակիորեն, տարբերվում են՝ կախված հակամարտության բնույթից, և, որպես կանոն, ներառում են այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանությունը, ահաբեկչության դադարեցումը, ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը, իրավունքի գերակայության հաստատումը և տարածաշրջանային կայունության խթանումը: Ընդհանուր առմամբ «քաղաքական պայմանականության» սկզբունքը արտաքին ազդեցության առավել տարած-

<sup>53</sup> **Williams P., Pecci F.**, *Earned Sovereignty: Bridging the Gap between Sovereignty and Self-Determination*, *Stanford Journal of International Law*, **41**, 1, 2004.

<sup>54</sup> **Tansey O.**, նշվ. աշխ., էջ 40-42:



ված ուղղակի լծակներից է: Վերջինս երկկողմ գործընթաց է դոնոր և շահառու պետությունների միջև, որը ներառում է տնտեսական կամ քաղաքական շահի որոշակի ձև՝ միայն ի պատասխան ժողովրդավարական զարգացման ուղղությամբ ներպետական հստակ գործողությունների: Օրինակ, 2003թ. Կոսովոյի համար առաջադրված չափորոշիչները՝ գլխավորապես մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտներից, որոնք բավարարելու դեպքում միայն հնարավոր կլինե՞ր սկսել կարգավիճակի վերաբերյալ բանակցություններ, Կայունացման և Ասոցացման համաձայնագրի կնքումը, ինչպես նաև Խաղաղության համաձայնագրի իրականացումը վերահսկող խորհրդի (Peace Implementation Council)՝ Բոսնիայում տիրող իրավիճակի վերաբերյալ դրական գնահատականը՝ որպես Բոսնիայում Բարձրագույն ներկայացուցչի գրասենյակի փակման նախապայմաններ: Միջազգային կազմակերպությունները կարող են կիրառել նաև պայմանականության մեկ այլ ձև՝ «անդամակցության պայմանականությունը»՝ որպես ժողովրդավարացման գործում իրենց դերակատարության բաղկացուցիչ մաս<sup>55</sup>: Ինքնորոշման հակամարտությունների դեպքում այս ռազմավարությունը կարող է ոչ թե ապահովել, այլ քայքայել անվտանգությունը, այն դեպքում, երբ սահմանված չափանիշների բավարարումը կապված չէ հստակ քաղաքական կարգավիճակի հետ: Բացի այդ, անհրաժեշտ է ապահովել նաև օբյեկտիվ պայմաններ չափանիշների բավարարման համար: Օրինակ, Կոսովոյի քաղաքական ինստիտուտների համար սահմանված էին այնպիսի չափանիշներ, որոնք մեծամասամբ ոչ թե իրենց վերահսկողության ներքո էին, այլ՝ ՄԱԿ-ի առաքելության (UNMIK) և Սերբիայի: Զուգահեռ կառույցների զինաթափումը, որոնց շարունակում էր ֆինանսավորել Բելգրադը, տեղի դերակատարների պատասխանատվության շրջանակում չէր: Սոցիալական

<sup>55</sup>Վիրակոսյան Մ., Հետկոնֆլիկտային հասարակություններում ժողովրդավարացման խթանման հնարավորությունները միջազգային կառավարման ճանապարհով, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2, 6, 2016, 65-88:

ձեռնարկությունների մասնավորեցումը և լիկվիդացիան շարունակում էր մնալ UNMIK-ի իրավասության շրջանակներում: Նույնը վերաբերում է նաև դատական համակարգի բարեփոխմանը, որը գտնվում էր UNMIK-ի Արդարադատության և Ոստիկանության բաղադրիչի վերահսկողության ներքո<sup>56</sup>: Սակայն, առավել մտահոգիչ էր այն, որ «նախ չափորոշիչներ, ապա՝ կարգավիճակ» ռազմավարությունը չափանիշների բավարարումը չէր կապում տարածքի հստակ քաղաքական կարգավիճակի հետ, ինչի արդյունքը եղան 2004թ. վերսկսված ռազմական բախումները<sup>57</sup>:

### Եզրակացություն

Միջազգային հարաբերություններում և միջազգային իրավունքում գրանցված տեղաշարժերի համատեքստում ինքնիշխանության և դրա ածանցյալ համարվող չմիջամտության սկզբունքի էվոլյուցիայի ուսումնասիրության արդյունքում կարելի է արձանագրել հետևյալը.

- Չկան այնպիսի խնդիրներ, որոնք բացառապես ներպետական են իրենց բնույթով: Այն հարցերը, որոնք միջազգային իրավունքով ենթակա են պետությունների կարգավորմանը, ժամանակի ընթացքում կարող են դառնալ միջազգային կարգավորման առարկա՝ միջազգային հարաբերություններում տեղի ունեցող զարգացումների և միջազգային սովորութային իրավունքի նոր նորմերի առաջ գալու կամ նոր համաձայնագրերի մշակման արդյունքում:
- Եթե նախկինում խաղաղության նկատմամբ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի որակումը գլխավորապես կապված էր ռազմական վտանգների հետ, ապա այսօր հակամարտությունների կամ զինված բախում-

<sup>56</sup> Knoll B., From Benchmarking to Final Status? Kosovo and the Problem of an International Administration's Open-Ended Mandate, *The European Journal of International Law*, 16, 4, 2005, 637-660.

<sup>57</sup> Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, Տիգրան Մեծ, 2012, էջ 209-217:

ների բացակայությունը չի դիտվում որպես բավարար երաշխիք անվտանգության ու խաղաղության պահպանման համար:

- Թեև ՄԱԿ Անվտանգության խորհուրդը միջազգային խաղաղության և անվտանգության վերականգնմանն ուղղված իր առաքելությունների մանդատում որպես կանոն նշում է մարդու իրավունքների զանգվածային խախտումները՝ որպես առաքելության արդարացման հիմք, սակայն դա հիմնականում ավելի լայն ու շարունակական բնույթ ստացած իրավիճակների տրամաբանական հետևանք է, այլ ոչ՝ անմիջական պատճառ: Դրանց թվում են 1) ժողովուրդների՝ իրենց ինքնորոշման իրավունքի տևական խոչընդոտումը, 2) պետության ձախողումը և 3) տարածաշրջանային կայունությունը սպառնալիք ներկայացնող ներպետական իրավիճակները:
- Ինքնիշխանության՝ որպես բացարձակ ու անբեկանելի սկզբունքի մեկնաբանությունն իր տեղը զիջել է ինքնիշխանության՝ որպես պատասխանատվության ընկալմանը, որի ձախողման դեպքում միջազգային հանրությունն իրավասու է ստանձնել պաշտպանելու պատասխանատվություն:
- Թեև ներքին ու արտաքին ինքնիշխանությունները միմյանց հետ սերտորեն կապված են, այդուհանդերձ արդյունավետ կառավարումը պայմանավորված չէ բացառապես միջազգային ճանաչմամբ, իսկ միջազգային ճանաչումը, իր հերթին, անպայմանորեն չի ենթադրում ներքին ինքնիշխանության արդյունավետ գործարկում:
- Ինքնորոշման հակամարտությունների դեպքում միջազգային համայնքի կողմից առավել հաճախ կիրառվող պայմանական ինքնիշխանության կամ, առհասարակ, «քաղաքական պայմանականության» ռազմավարությունը կարող է ոչ թե ապահովել, այլ քայքայել անվտանգությունը, այն դեպքում, երբ ինքնորոշվող տարածքի համար սահմանված չափորոշիչների բավարարումը կապված չէ հստակ

քաղաքական կարգավիճակի հետ և ապահովված չեն նախնական օբյեկտիվ պայմաններ այդ չափանիշների իրագործման համար:

## **Transformation of the Principles of Non-Interference and Sovereignty within International Law and International Relations**

MARINE KIRAKOSYAN

*Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Armenia*

The article examines the evolution of the principles of non-interference and sovereignty in the context of the shifts in international relations and international law. It tends to present the content of these principles, the changes thereto, the problems within the domestic jurisdiction of states having the potential to become the subject of international regulation as well as the forms of sovereignty and their interdependence based on the fundamental documents of international law and the practice of UN interference. The problem is being studied in a three-dimensional level, within the framework of its legal and political components and the existing scientific approaches to the problem.